Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3789

281.6
W-76

1870

2010

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԵՌԵԼՈՑ

1870

281.6
Խ-76

23043-4

23043
281.6
Ի-76

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ

Պետրոս առաքեալ և Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ Արքայութեան մէջ իրարու հանդիպելով՝ այսպէս կը խօսակցին։

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ. Բարի լոյս, Պետրոս առաքեալ։

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ. Եւ քեզ լոյս բարի, Սրբազան Հայրապետ։

ԼՈՒՍ. Ո՞ւր ես, բարեկամ. քանի օր է որ զքեզ տեսնել կուզեմ։

ՊԵՏ. Իմ պաշտօնական տեղս Արքայութեան դռանն գաւիթն է, գիտես, հոն գալու էիր որ զիս տեսնէիր։

ԼՈՒՍ. Այս շաբաթ քանի անգամ որ գացի՝ դու հոն չէիր։

ՊԵՏ. Իրաւունք ունիս. այս շաբաթ գրեթէ շաբաթուն Հայր Աստուծոյ հետ էի՝ որ ինծի գլուխ քերելու ժամանակ չըթողուց։

ԼՈՒՍ. Ո՞ւր կերթայիր այսպէս արտաքնօք։

ՊԵՏ. Հայր Աստուած զիս կանչել տուաւ։

ԼՈՒՍ. Ի՞նչ գիտմամբ արդեօք։

ՊԵՏ. Ո՞վ գիտէ. բայց կը մակաբերեմ որ Սրբազան Պապին վերաբերեալ խնդրոյ մը վրայ իմ կարծիքս հարցնելու համար է։

ԼՈՒՍ. (ԺՊՊԵԼՈՎ) Հաւանական է։

ՊԵՏ. Ժպտեցար, Հայրապետ. իրաւունք ունիս ժպտելու, մանաւանդ թէ վրաս ծիծաղելու. վայ իմ յաջորդիս, թէ որ օր մը այս իմ պաշտօնէս հրաժարիմ։

ԼՈՒՍ. Ինչո՞ւ։

6191
41
6191

ՊԵՏ. Հաւատա՛, Հայրապետ, վայրկեան մը հանգիստ չունիմ և գթալու արժանի եմ։

ԼՈՒՍ. Զարմա՛նք. թէ որ դու այսպէս խօսիս, ապա դըժոխոց դռնապանն ի՞նչ ըսէ. սակաւաթիւ ոմանց դուռ բանալն ուր է, ամբաւ բազմութիւնը ներքսածելն ո՞ւր է։ Ես դռնապանութեան պաշտօնդ նախանձելի կարծէի եւ ոչ թէ անտանելի։

ՊԵՏ. Իրաւ, իմ պաշտօնս դիւրին կերեւայ, բայց իրօք դժուարին է։ Անշուշտ շատ մարդ ներս առած չունիմ, բայց ամէն օր խեղճ մը դժոխք եւ կամ քաւարան գացող թափառական հոգիներ սխալմամբ դռանս զարնելու կուգան. ասոնց ամէնուն դուռ բանալու է, ամէնուն հետ բանակցելու է, ամէնն ալ զատ զատ ուղղելու և ճամբայ դնելու է, շատ անգամ նաեւ մխիթարելու է։ Այս դիւրին գո՞րծ է. դու դժոխք գացող հոգի մը մխիթարած ունի՞ս. ես այն բանն ալ ըրած եմ. Անցածներս, բնաւ մոռնալու չեմ, միամիտ մեղաւոր մը հոս եկաւ, որուն դառնալ՝ դժոխք երթալ շատ դժուար կուգար, "Բարեկամ, ինչո՞ւ յուսահատիս. յաւիտենականութիւնն ալ վերջ մը ունի և Աստուծոյ ողորմութիւնն ամբաւ է, դարձեալ կը տեսնուինք", ըսելով՝ համոզեցի, ճամբեցի։ Թողում այն պապական հոգիներն որ ամէն օր դժոխքէն և կամ քաւարանէն փախչելով՝ կուգան հոսկէ ջուր խնդրելու և զոր յանդիմանելով կը վռնտեմ։ Մօտերս այս տեսակ նեղութիւններս այնչափ շատցան որ բարկանալով՝ շաբաթ մը դուռս մարդու չը բացի, ուրեմն պառաւ մայրապետ մը գոց դռան առջին շաբաթ մը սպասելու պարտաւորեցաւ և սոյն պատճառաւ Աստուածածին գիս հրապարակաւ յանդիմանեց։ Կարծե՞ս հիմայ որ իմ դռնապանութեան պաշտօնս նախանձելի է։

ԼՈՒՍ. Զէ, թէ որ զայն ձրի տալու ըլլան՝ հիմայ չեմ ընդունիր։

ՊԵՏ. Այս դեռ բան մը չէ. պաշտօնս դժուարին է, ձանձրալի է, բայց պաշտօն բռնել նեղութիւն բռնել է, և ես իմ բեռս, թէ և ծանր, համբերութեամբ՝ նաեւ սիրով կը

կրէի, թէ որ այս բեռին վրայ աւելի ծանր բեռ մ'ալ յաւելած չըլլային։ Զիս, Հայրապետ, բռնի պապերուն փաստաբանն ըլլալու պարտաւորեցին, պատճառելով որ ես գլուխ առաքելոց եմ և Հռովմայ առաքելական աթոռն իմ հաստատած աթոռս է, ուստի սոյն աթոռին վրայ յաջորդաբար նստող պապերն՝ Աստուծոյ առջին ես պաշտպանելու եմ։

ԼՈՒՍ. (ծիծաղելով) Ծանր պաշտօն։

ՊԵՏ. Այո, ծանր պաշտօն որ զիս կը պարտաւորէ, կամաւ ակամայ, պապերուն ամէն ըրածն արդարացնելու։

ԼՈՒՍ. Ինչո՞ւ կամաւ ակամայ։

ՊԵՏ. Նախ՝ իմ պաշտօնս պաշտպանել է, չէ թէ ամբաստանել և ամէն իր համբաւին հոգացող փաստաբան, նաև թէ որ պաշտպանած մարդն անշուշտ մահու արժանի մահապարտ մ'ըլլայ, բնականապէս զայն արդարացնելու և ազատելու պիտի ջանայ։ Բայց այս մէկին թողում, ո՞վ է այն ամբաստանեալն որ պաշտպանելու եմ, իմ յաջորդս. միթէ կարելի՞ է որ ես իմ յաջորդս՝ փոխանակ արդարացընելու՝ դատապարտեմ և ուրիշ առաքելոց առջին խայտառակ ըլլամ. միթէ յաջորդիս պատիւն իմ պատւոյս պէս պահպանելու չե՞մ։

ԼՈՒՍ. Թէ որ Պապերուն որ եւ իցէ ըրածն արդարացնելու ես, պաշտօնդ ոչ միայն դժուար է, հապա նաեւ գրեթէ պատիժ է։

ՊԵՏ. Որո՞ւ կ'ըսես, գոնէ յաջորդներս այս իմ պաշտօնս դիւրացնելու ջանային, բայց այն ալ ըրած չունին, մանաւանդ թէ՝ գոգցես դիտմամբ՝ զայն դժուարացնելու կ'աշխատին։

ԼՈՒՍ. Իրաւ, կը զարմանամ համբերութեանդ վրայ։

ՊԵՏ. Այո, զարմացի՛ր, բայց համբերութիւնս հատնելու վրայ է, ինչու որ դանակն ա՛լ ոսկորին դպաւ։ Երկայնամիտ եմ, բայց չեմ ուզեր որ այս երկայնամտութեանս վրայ վստահելով՝ հետս խաղան։ Եղբայր, այս Պիոս իններորդին քահանայապետութենէն 'ի վեր քաշածս ես միայն գիտեմ և այս առաջին անգամն է որ հետդ ընտանեբար խօսելով

կը յայտնեմ։ Օր մը նոր հաւատոյ մաս մը կը հնարէ, ուրիշ օր մը թագաւոր մ'իր ազգին հետ կը նզովէ, օր մը ժողովուրդն իր օրինաւոր իշխանին դէմ և ուրիշ օր մը իշխանն իր հաւատարիմ ժողովրդեան դէմ կը գրդռէ, օր մը կռապաշտ թագաւորէ մը քանի մը անհոհեմ մարտիրոսներու մահուան վրէժն առնելու համար Եւրոպան ոտք հանելով՝ նոր խաչակրաց բանակ մը Ասիոյ վրայ կը թափէ և ուրիշ օր մը անպաշտպան ազգերուն իրաւանց բռնի տիրելու կը ջանայ, կոնդակ կոնդակի վրայ կը հանէ, բանադրանաց շանթերն առատապէս աջին ձախին կը նետէ, միով բանիւ բոլոր աշխարհս անդադար կը խռովէ. ուստի ամեն ժամ, ամեն վայրկեան նոր բողոք կայ անհանդարտ քահանայապետին դէմ և ես պարտաւոր եմ ամեն բողոք հերքելու, թէ և իրաւացի, և Աստուծոյ առջին յաջորդս արդարացնելու։ Իրաւ որ ճարս հատաւ, աս պապն իմ ճիւաղը է, երբ որ Անարատ Յղութիւնն հաւատոյ մասն ընել ուզեց. յաջորդս ուրանալու վրայ էի, բայց Աստուածածնայ հաճոյ ըլլալու համար՝ այն նոր հաւատոյ մասն ալ պաշտպանեցի, բայց զայն Հայր Աստուծոյ ընդունել տալու համար հոգիս բերանս եկաւ։ Ինչ և իցէ, անցաւ.

ԼՈՒՍ. Ես թէ որ քու տեղդ ըլլայի, գոնէ այս փաստաբանութեան պաշտօնէս կը հրաժարէի։

ՊԵՏ. Հրաժարեցայ, եղբայր, բայց ազատելու հնարք չը կայ։ Անցածներս "Հայր Աստուած, ըսի, այս հազարութեն հարիւր և այսչափ տարի է որ Հռոմայ քահանայապետին պաշտօնական փաստաբանն եմ, կարծեմ թէ մարդու մը համար այսչափս բաւական է. կը խնդրեմ Ձեր Ամենակալութենէն որ զիս՝ գոնէ քանի մը դար՝ արձակէք և այս պաշտօնս ուրիշի յանձնէք", բայց Հայր Աստուած մտիկ չըրաւ և կարծեմ ընելու չէ. դարերէ 'ի վեր իմ երեսիս և բնութեանս վարժեցաւ և օտար երես տեսնել չուզեր։

ԼՈՒՍ. Խեղճ Պետրոս առաքեալ, հիմայ ի՞նչ պիտի ընես. Հռոմ տիեզերական ժողով մը կայ որ յուի է և մօտերս նոր հաւատոյ մաս մը պիտի ծնանի։

ՊԵՏ. Աստուած ասայ որ ողան վիժէ. իրաւ, Հայրապետ,

գիշեր ցորեկ այս նոր հաւատոյ մասին կը մտածեմ և վերջին ատիճան բարկացած եմ պապին դէմ որ այս խնդիրս դուրս հանեց։ Դեռ Հայր Աստուած ասոր վրայ իմ առջեւս խօսք չբացաւ, բայց անշուշտ պիտի չուշանայ բանալու և չը գիտեմ թէ ի՞նչ պատասխան տամ։

ԼՈՒՍ. Այս նոր հաւատոյ մասին վրայօք քու մասնաւոր կարծիքդ ի՞նչ է։

ՊԵՏ. Այս հարցմունքդ աւելորդ բան է. գիտես որ բընութեամբ ազատամիտ եմ, թէպէտ և պաշտօնով ազատամտութիւնն անիծելու պարտաւոր եմ։ Օր մը Աստուած խոնարհելով մարմնացաւ և մարդկացաւ, այսօր մարդս հրապարտանալով աստուածանալ կուզէ։ Մարդկային իրաւանց յափշտակող թշնամին, որ պապն ըսել է, այսօր Աստուծոյ իշխանութիւնն անգամ իրեն գրաւելու կը ջանայ։ Զարմա՛նք, ամբարտաւան մարդս այս ատիճան կուրանայ որ զանձն անսխալ կարծէ։ Ես, գլուխս առաքելոց, որ Որդին Աստուծոյ հետ ընտանեբար կը խօսէի, անսխալ չէի և իմ յաջորդս անսխալ է. սխալական մարդ մ'էի երբ Ցիսուսին արիւն քրտնելով ազօթած գիշերն ես հանգիստ քնացայ, սխալական մարդ մ'էի երբ թուրս մերկանալով լրտեսող ականջ մը կտրեցի, և որ աւելին է, սխալական մարդ մ'էի երբ իմ Աստուածս վրայէ վրայ երեք անգամ ուրացայ. Թողում Պօղոսին հետ ունեցած վէճերս և ուրիշ սխալական գործերս, և այսու ամենայնիւ իմ յաջորդս անսխալութիւնն ինձմէ ժառանգած է կըսէ, որով անսխալ կը սխալի։

ԼՈՒՍ. Նայի՛նք Հայր Աստուած այս նոր հաւատոյ մասին ի՞նչ պիտի ըսէ։

ՊԵՏ. Ճշմարիտ թէ որ այս այլանդակ խնդիրս պաշտպանելու ըլլամ, զոր դեռ որոշած չեմ, յաջողելու յոյս չունիմ։ Այսպիսի բան Հայր Աստուծոյ ընդունել տալու համար՝ իմ ճարտասանութիւնս նաեւ չըբաւեր։ Թէեր Որդին Աստուած օգնութեան հասնելու ըլլայ, խօսք չունիմ, բայց, այս առաջակայ խնդրոյս մէջ, Որդին Աստուծոյ միջնորդութիւնն անգամ տարակուսելի է։

ԼՈՒՍ. Արդէն մարդիկ ամէն կողմանէ բողոքելու սկսան այս նոր հաւատոյ մասին դէմ։

ՊԵՏ. Իրաւունք ունին բողոքելու. թէ որ ես ալ դեռ աշխարհիս վրայ ըլլայի՝ կը բողոքէի։ Ոմանք կարծեն թէ Պիոս պապն ալ այսօր ցնդած է և թէ խորհրդականներուն խաղալիկն է և այս հաւանական է, բայց այն խորհրդականներուն անխոհեմութեանն ի՜նչ ըսեմ. միթէ երկու նոր հաւատոյ մաս վրայէ վրայ շինելու էին, մարդկանց ազատութեան վրայ վստահին, խօսք չունիմ, բայց գոնէ մարսողութեան համար դար մը թողլու էին։ Թէ որ ամէն յաջորդներս այս պապին հետեւելու ըլլան, շարունակ նոր նոր հաւատոյ մասեր հնարելով՝ աշխարհիս վրայ անշուշտ հաւատք պիտի չը թողուն, և որ աւելին է, Սուրբ Պետրոսին գանձանակն ալ պարապ պիտի մնայ։

ԼՈՒՍ. Այդ՛ս, Պետրոս առաքեալ, ճշմարիտ խօսեցար.

ՊԵՏ. Ես ճշմարտութիւնն՝ երեք անգամ ուրանալէս ետեւ՝ միշտ խոստովանած եմ. բայց այս մէկդի թողում։ Եղբայր, Քրիստոս օր մ՚ ինծի ըսաւ "Դու ես վէմ և այն", այս հիմնական վէմին վրայ իմ յաջորդներս ի՜նչ [illegible] չը շինեցին. անշարժական է և որ և իցէ բեռ կրնայ կրել ըսելով՝ վրան բուրգ մը կանգնեցին զոր օր ըստ օրէ բարձրացնելու կաշխատին։ Բայց թէ որ ես հաստատուն եմ, կրած բեռս չափէն աւելի է, նա մանաւանդ թէ խախուտ է, և այս նոր անսխալութեան գաղափարն որ շինելու վրայ են՝ վախեմ թէ բոլոր շէնքն անգամ չը կործանէ. և միթէ կարելի՞ է որ շէնք մը բովանդակ կործանի և հիմնական քարն անշարժ մնայ։

ԼՈՒՍ. Թէ որ միայն նոր շինուած գաղափարն՝ աւելորդ գալով կործանի, հոգ չէ, որովհետեւ պապէն՝ կարդինալներէն և խել կրօնաւոր եպիսկոպոսներէն զատ՝ այն գաղափարին մէջ բնակող պիտի չըլլայ, այս ստոյգ գիտեմ։

ՊԵՏ. Ո՛ւր էր թէ այնպէս ըլլար. բայց իմ ենթադրութիւնս աւելի հաւանական է, ուստի մեծապէս հոգալու պատճառ ունիմ։

ԼՈՒՍ. Եկեղեցւոյն ապագան սեւ է, տարակոյս չը կայ.

բայց դու Սրբազան Քահանայապետին հետ խօսելով՝ ըսելու չէի՞ր որ գացած ճամբան մոլար է, և թէ՝ թէ որ պապերն այս ճամբան չը թողուն, մօտերս ճշմարիտ քրիստոնեան կանգելով վնտռելու պիտի պարտաւորին։

ՊԵՏ. Հայրապետ, թէ որ դու պապերն անուամբ միայն գիտես, Պետրոս առաքեալ փորձով գիտէ. և թէ որ կարծես որ պապին հետ տեսնուիլ դիւրին բան է՝ մեծապէս կը սխալիս։ Օր մը, ես, գլուխ առաքելոց, իմ ամբարտաւան յաջորդիս անդրասենեակին մէջ չորս ժամ սպասեցի, անօթի փորանց, և քահանայապետին երեսն անգամ չը կրցայ տեսնել։

ԼՈՒՍ. Շատ բան։

ՊԵՏ. Այո՛, ըսածս ճշմարիտ է։ Անցած ամիս, դժուարաւ կրցայ սպրդելով սրահին մէջ մտնել։ Դժբաղդաբար այն օրն ալ Փաղթէացւոց Հայրապետին դէմ բարկացած օրն էր։ Գրասեղանին վրայ երեք հատ կոտրած գրիչ եւ կործանած կաղամար մը և գորգին վրայ մելանի աղտեր տեսայ, որ վերջացած պատերազմին նշաններն էին։

ԼՈՒՍ. Ի՞նչպէս դքեզ ընդունեցաւ։

ՊԵՏ. Նախ՝ զիս տեսնելով՝ ոչ միայն ոտք չելաւ, հապա նաեւ ոտք երկնցուց որ համբուրեմ, որպէս և սովոր է ընելու իրեն այցելութեան եկող հիւրերուն։ Ես հարկաւ չը խոնարհեցայ. առաջ երեսիս զարմացմամբ նայեցաւ, յետոյ ուշադրութեամբ զիս դիտելով ճանչցաւ։ Երկայն ժամանակէ ՚ի վեր զիս տեսած չըլլալուն համար՝ օտար երես մը տեսնել կարծեր, կարծեմ նաեւ որ տեսութիւնն ալ, իմացականութեանը պէս, տկարացած ըլլալու է։ Առանց տեղէն շարժելու՝ գլխով բարեւ մը տուաւ և ըսաւ. "Պետրոս առաքեալ, ի՞նչպէս անհրաման հոս գալու համարձակեցար և ո՞վ դքեզ ներս մտոյց"։ – "Սուրբ Հայր, ըսի, կարծեմ թէ Քրիստոս Տէրն մեր սենեկապետ չունէր և պէտք չէր հրաման առնել Որդւոյն Աստուծոյ մօտենալու և խօսելու համար"։ Այս պատասխանիս վրայ՝ մէկէն ճակատն ամպոտեցաւ, բանադրանաց շանթերն աչքերուն մէջ փայլեցան, բայց շուտով իմ ո՛վ ըլլալս յիշելով՝ զիջաւ։ Իսկ ես, փոր-

ձով գիտելով որ իմ յաջորդս շատոնց 'ի վեր ստութիւնն իբրեւ ճշմարտութիւն ընդունելու վարժած է և ճշմարտութիւն մը լսելով սուրբ ականջն աղտոտել կարծէ, չը զարմացայ այս բարկութեան վրայ։ — "Պետրոս առաքեալ, ըսաւ Պիոս, գիտեմ որ դու Սուրբ ես, գլուխ առաքելոց և դռնապան արքայութեան, այսու ամենայնիւ հետս այսպէս ընտանեբար խօսելու չես։ Որո՞ւ կողմանէ հոս եկար և ի՞նչ պատճառաւ, պատասխանէ։" Եւ ես պատասխանեցի. "Իմ կողմանէս եկայ՝ քեզ, Սուրբ Հայր, խրատ տալու համար որ պապական անսխալութիւնն հաւատոյ մաս ընել չաշխատիս, խելք չէ. երկու նոր հաւատոյ մաս մի և նոյն քահանայապետին ներել անկարելի է. միջին դարն անցաւ, այս դարս ազատամիտ է, գիտես, ուստի խոհեմութեամբ զայն խաբելու է. լսէ հին ձկնորսի մը խրատին, մարդս ալ ձկան պէս որսալու է"։ Այս խրատիս վրայ ալ աւելի բարկանալով՝ "Ելլ, դնա՝ քու պաշտօնդ կատարէ, ըսաւ, ձկնորսէ մը դաս առնելու ժամանակ չունիմ"։ Ես չը խռովելով՝ "Սուրբ Հայր, ըսի, զգուշացիր խորամանկ շողոքորթներէն և անմիտ խորհրդականներէն որ գիտութեամբ կամ անգիտութեամբ զքեզ մոլորեցնելու կը ջանան. ոչ շողոքորթ աղուէսին հաւատաս և ոչ անմիտ ագին վրայ վստահիս. աղուէսին ուզածն ի՞նչ է, քու պարարտ հաւերդ ուտել է. սագերն որ ըսես, իրաւ անդամ մը զՀռոմ աղատեցին, բայց թէ որ նորէն անոնց պահպանութեան վստահիս, վայ Հռոմին"։ Նայիս Պիոս կրակ կարեցաւ. "Ելլ, կորիր, անմիտ ձկնորս, ըսաւ պոռալով, միսանդամ հոս ոտք կոխելու չես մինչեւ որ զքեզ կանչեմ տամ"։ Այսոր վրայ ես նաեւ բարկացայ և օրհնած բերանս բանալով՝ "Անմիտ քահանայապետ, ըսի, վայ այն եկեղեցւոյն որու գլուխ ես դու. իրաւամբ Յաճիին ըսաւ որ ձուկ մը գլխէն կըսկսի հոտելու։ Վանէ՛ զիս, իմ հոգս չէ. բայց սպասէ, մնտերս պիտի գամ և անհրաման՝ զքեզ տեսնելու և այն օրն ալ քու վերջին օրդ պիտի ըլլայ։ Ցիշէ՛ որ քահանայապետութեանդ քսան և հինգերորդ տարին մնտեցաւ և թէ մնտերս Արքայութեան դռնապանին

բարեհաճութեան կարօտ պիտի ըլլաս"։ Զարհուրած՝ նայեցաւ երեսիս, բայց ես վայրկեան մ'ալ չը կեցայ՝ դուրս ելայ։ Ի՞նչ կըսես Հայրապետ, պապին այս կերպ ընդունելութեան վրայ։

ԼՈՒՍ. Ի՞նչ ըսեմ, կարելի՞ է որ ամէն օր Հոգւոյն Սրբոյ հետ ընտանեբար խօսի և ամբարտաւան չըլլայ, ի՞նչ ես դու, մարդ մը. իսկ արդ պապն աստուածանալու վրայ է։ Երեք ամիս եղաւ որ Հոգին Սուրբ հոս ոտք չը կոխեց. ըստ ոմանց՝ վաթիկանին մէջ մտանաւոր դստիկոն մ'ունի ուր գրեթէ բանտարկուածի պէս է։

ՊԵՏ. Ճշմարիտ է. բայց մնտերս օգտակարութեան պիտի երթայ՝ թողութեամբ պապին, ինչու որ Հռոմայ կլիմային չը կրցաւ վարժիլ։

ԼՈՒՍ. Լաւ, բայց դու՝ որ մնտերս Հռոմ գացիր՝ չըսե՞ս հոն ի՞նչ կայ՝ ի՞նչ չըկայ. տիեզերական ժողովոյն վրայօք ի՞նչ նոր լուր ունիս։

ՊԵՏ. Հռոմ այսօր ճշմարիտ աշտարակ Բաբիլոնի է, լեզուներու խառնակութիւնն հոն տեսնելու է. հաւատա՛, Հայրապետ, որ հոն երկու կարծիք չը լսեցի որ իրարու ճիշդ համաձայնէին։ Տիեզերական ժողովն որ ըսես՝ ճշմարիտ սպանդարան մ'է ուր՝ աշխարհիս չորս կողմէն՝ խեղճ եպիսկոպոսներն ոչխարի պէս բերին մորթելու համար։ Ասոնց գլխաւոր պաշտօնն, ինչպէս որ գիտես, պապին անսխալութիւնն հաւատոյ մաս ընել է, և զայս հաստատելով՝ իրենք իրենց ժառանգական իրաւանց յափշտակութեան վճիռն ստորագրած պիտի ըլլան։ Թէ որ պապն անսխալ ըլլայ, հարկաւ այնուհետեւ տիեզերական ժողովք կազմելու պէտք չունի և որ և իցէ քահանային, եպիսկոպոսին կամ հայրապետին պապին դէմ բողոքել անկարելի է։

ԼՈՒՍ. Իրաւ, պապին այս ըրածն ի՞նչ է՝ թէ չէ մահապարտին իր մահու վճիռն ընծայել որ ստորագրէ. ի՞նչպէս եպիսկոպոսներն ատոր պիտի հաւանին։

ՊԵՏ. Պիտի հաւանին, տեսնես, պիտի հաւանին, ոմանք կամաւ և ոմանք բռնի։ Ասոնց թշուառ վիճակին վրայ քա-

նի որ մոռանամ, այլանդակ պատկեր մը կը յիշեմ զոր դրա-
վաճառի մը խանութին մէջ տեսայ, երբոր ութսուն տարի
առաջ, Վոլթէրին և Ռուսոյին չար սկզբանց Գաղղիոյ մէջ
տարածելուն պատճառաւ, Հայր Աստուած դիս՝ իբրեւ ար-
տաքոյ կարգի դեսպան՝ փարիզ ղրկեց որ վերոյիշեալ ախ-
տին տարածման վրայ իրեն ստոյգ տեղեկութիւն մը բե-
րեմ։ Գաղղիոյ այն օրերն ողբալի օրեր էին. թագաւորն
այն թոյլ և վարանող իշխանն էր որ դլխաւորութեամբ մե-
ռաւ։ Տէրութիւնն արքունի դանձին աղքատութեան դար-
ման դտնել ուզելով՝ ժողովրդեան երեք կարգերուն, որ
ըսել է՝ կղերականներուն, աղնուականներուն և քաղաքա-
յիներուն երեսփոխաններն հրաւիրած էր դալու՝ ընդհա-
նուր ժողով մը կազմելու, որով կրկին և կրկին անդամ
սխմած լեմոնն այս անդամ այնպէս պիտի քամէր որ չոր
կեղեւ մը միայն պիտի թողուր։ Եւ ահա տեսած պատկերս
այս ժողովոյն այլանդակ նմանութիւնն էր. նայիս՝ դեր տան-
տէր մը, որ թագաւորն էր, բակին մէջ նստած էր և չորս
դին շատ մը հաւեր, սագեր և բադեր կային՝ որ ժող-
վրդեան այլ եւ այլ կարգերուն նշանաւոր անձերն էին.
և տանտէրն ատոնց խօսելով՝ "Սիրելի հաւերս, սագերս և
բադերս, կ'ըսէր, դիտէ՞ք թէ ինչու զձեզ հոս ժողվեցի։"
– "Չէ", կը պատասխանէին միաբերան։ – "Զձեզ հոս ժող-
վեցի որպէս զի դուք՝ ձեր բերնով՝ որոշէք թէ ո՞ր համե-
մով (սալցա) ես զձեզ ուտելու եմ։" – Ընդհանուր ապ-
շութիւն և լռութիւն. վերջապէս քաջ աքաղաղ մը (քա-
նի որ աքաղաղն յիշեմ՝ իմ սխալականութիւնս միտքս կու-
գայ) լռութիւնն ընդհատելով և բողոքելով "Բայց պա-
րոն նախագահ, կ'ըսէր, մենք չենք ուզեր որ զմեզ ուտես"։
Եւ նախագահն աքաղաղին դառնալով կ'ըսէր, "Լռութիւն,
պարոն աքաղաղ, առաջարկեալ խնդիրին հեռացար. որ ը-
սել էր՝ ես զձեզ պիտի ուտեմ, զայս որոշած եմ, դուք
միայն համեմին վրայ վիճելու ազատութիւն ունիք"։ Ահա
Հռոմայ սինոդոսին ճշմարիտ վիճակն ալ այս է։

ԼՈՒՍ. Շատ բան. պապին որկրամոլութեան վրայ ինչու
զարմանամ, զայն հնուց դիտեմ. բայց եպիսկոպոսներն ան-

դամ պապին կերակուր ըլլալու հաւանի՞ն, այս է զարմա-
նալին։

ՊԵՏ. Յիշէ, Հայրապետ, որ երեւելի բանաստեղծ մ'ըսաւ.

"Թող բացարձակ կեսար տիրէ մեր վրայ՝
Միայն թէ կոյր ռամիկն ըլլայ մեզ ծառայ"։

Ահա կղերականներուն ամեն ընթացքին շարժառիթն այս է։
Թէ որ գթաս՝ գթա ժողովրդեան վրայ և չէ թէ առաջ-
նորդներուն վրայ որ կատուի պէս՝ նաեւ թէ որ իյնան՝
իրենց չորս թաթերուն վրայ միշտ կ'իյնան։

ԼՈՒՍ. Իրաւունք ունիս։ Հիմայ այս թողունք. դիտե՞ս
ինչու համար Հայր Աստուած զքեզ կանչել տուաւ։

ՊԵՏ. Չէ. Դու դիտե՞ս։

ԼՈՒՍ. Դիտեմ։

ՊԵՏ. Ըսէ՛ տեսնեմ։

ԼՈՒՍ. Երբոր Հռոմ դայիր՝ Հայոց վրայօք անշուշտ շատ
բան լսեցիր։

ՊԵՏ. Շատ. պապին անսխալութեան խնդիրն ամեն խօ-
սակցութեան դլխաւոր նիւթն է և անմիջապէս հետեւողն
Հայոց խնդիրն է. բայց այս վերջին խնդրոյն վրայօք, ը-
ստոյգ տեղեկութիւն առնելու ժամանակ չունեցայ. ուստի՝
մանաւորապէս այս բանիս համար՝ հետդ տեսնուիլ կ'ու-
զեի։ Ի՞նչ է այս խնդիրս, կ'աղաչեմ։

ԼՈՒՍ. Թադէոս՝ առաքելական ընկերդ՝ դիտես։

ՊԵՏ. Անշուշտ դիտեմ։ Երբոր Հայաստան երթալու՝ ա-
ւետարանելու եղաւ, անոր աղաչեցի որ հոնկէ Նոյ նահա-
պետին տապանակէն կտոր մ'ինծի ղրկէ, խոստացաւ՝ բայց
մոռցաւ։

ԼՈՒՍ. Զարմանք չէ. միթէ գլուխ քերելու ժամանակ
ունեցաւ հոն։

ՊԵՏ. Հոդ չէ. ես յետոյ Նոյին հետ արքայութեան մէջ
տեսնուելով՝ ղեկին մէկ կտորն անկէ ուզեցի՝ առի և դեռ
կը պահեմ իբրեւ հնութիւն. ինչ եւ իցէ, խօսքդ շարու-
նակէ։

ԼՈՒՍ. Թադէոս Հայաստան դալով և Հայոց քարոզելով՝

շատ մարդ քրիստոնէութեան դարձուց, Աբգար Թադա-
ւորէն սկսելով, և Ադդէն Կաթողիկոս Հայոց ձեռնադրեց։

ՊԵՏ. Ասանք դիտեմ։

ԼՈՒՍ. Ժամանակ անցաւ, Աբգար մեռաւ, Աբգարին
յաջորդներն իրենց հին կռապաշտութեան դարձան և նոր
քրիստոնեայներուն մեծ մասն ալ նմանապէս քրիստոնէու-
թիւնն ուրանալով՝ կռապաշտ եղան. բայց քրիստոնէու-
թիւնն ամբողջ չը մեռաւ Հայոց մէջ. սակաւաթիւ ոմանք
հաւատարիմ մնացին և անոնցմէ սերող Հայերն Ադդէին
յաջորդներն իբրեւ օրինաւոր Հայրապետ Հայոց ճանչցան։

ՊԵՏ. Ճշմարիտ է։

ԼՈՒՍ. Երբոր ես Հայաստան գալով քարոզելու սկսայ,
ժողովրդեան նորակրօն մասն արդէն բազմացած էր։ Անո-
գուտ է իմ պատմութիւնս պատմել, զոր Դու դիտես. մի-
այն այս պարագան քեզ յիշեցնել կ'ուզեմ որ երբոր Տըր-
դատ թագաւորն ապաշխարելով դարձաւ քրիստոնեայ ե-
ղաւ, զիս իբրեւ Ադդէին օրինաւոր յաջորդ և Հայոց Կա-
թողիկոս ճանչցաւ, և ժամանակակից Սեղբեստրոս պապն
ալ այս իմ ազգային ընտրութիւնս իբրեւ օրինաւոր հաս-
տատեց. յետոյ՝ Հռոմայ առաքելական աթոռին վրայ յա-
ջորդաբար նստող պապերն իմ յաջորդներուս աղաւ ազ-
գային ընտրութիւնն նմանապէս հաստատեցին, առանց եր-
բէք Հայոց եկեղեցւոյն ներքին կառավարութեան մէջ ձեռք
մտնելու։ Բայց այս մտերս դժբաղդաբար եկեղեցւոյս մէջ
երկպառակութիւն ընկաւ և երկու գլխաւոր ճիւղերէն մին
էջմիածնական՝ միւսն ալ կաթոլիկ անուանեցաւ. բայց այ-
սու ամենայնիւ երկուքն ալ Լուսաւորչական Հայ անուան
հաւատարիմ մնացին։ Ես այսօր երկուքին վրայ ալ նոյն
հոգւով կը հոգամ և երկուքն ալ նոյն սիրով կը սիրեմ. ին-
չո՞ւ խորութիւն ընեմ. թէ որ ճիւղերն իրենց արմատական
բունն ամենեւին չուրանան, բունն ալ ինչո՞ւ իր ճիւղերն
ուրանայ։ Էջմիածնական ճիւղին վրայ շատ հոգ ըրած չու-
նիմ, բայց կաթոլիկին համար միշտ սիրտս դողի մէջ էր և
ահա այսօր յայտնի եղաւ որ վախս իրաւացի էր։

ՊԵՏ. Ի՞նչ ըսել կ'ուզես։

ԼՈՒՍ. Պետրոս առաքեալ, ինչպէս որ դու Հռոմայ քա-
հանայապետական աթոռին վստահանն ես, ես նաեւ իմ
եկեղեցւոյս օրինաւոր պաշտպանն եմ։

ՊԵՏ. Ո՞վ չես ըսաւ, Հայրապետ։

ԼՈՒՍ. Դու իմ այս հարցմանս պատասխանէ. երբոր Դու
Հռոմ էիր, Թադէոսին և կամ Ադդէին կոնդակ ղրկեցի՞ր։

ՊԵՏ. Այս ի՞նչ հարցմունք է. ես ոչ Հռոմէն և ոչ ուրիշ
տեղէ կոնդակ ղրկած ունիմ Թադէոսին և կամ Ադդէին։
Նախ՝ ես բնութեամբ գրող չէի և կրտսեր եղբօրս Պօղոսին
պէս չէի որ, խօսքս մէջերնիս մնայ, խաբէութեամբ Եսա-
ւին անդրանկութիւնն յափշտակող Իսահակին պէս, իմ
անդրանկութիւնս իրեն գրաւելու ջանայ՝ բայց չը յաջողե-
ցաւ։ Այն պօղոս առաքեալն է որ սովոր էր ապին անդին
շարունակ նամակ ղրկելու. օր մը Կորնթացիներուն, օր մը
Թեսաղոնիկեցիներուն, ուրիշ օր մ'ալ Հռոմայեցիներուն,
առանց Գաղատացիներն անգամ մոռնալու։ Յետոյ՝ երբոր
Հայոց մէջ Թադէոս իր առաքելական քարոզին և Ադդէն
իր Հայրապետական պաշտօնին հոգալու հետ էին, ես Հը-
ռոմայ գեղանավոր գերեզմաններուն մէջ պահուած՝ նո-
րակրօն քրիստոնէից հետ կը պատարագէի, ամեն ժամ
վախնալով որ հարիւրապետ մը չը գայ զմեզ ձերբակալելու
և նահատակութեան տանելու, և հաւատամ որ ոչ Թադէո-
սին և ոչ Ադդէին մտածելու վայրկեան մ'ունէի։ Եւ ի՞նչ
իրաւամբ Թադէոսին առաքելական ընթացքին վերակացու
ըլլայի, Թադէոսին՝ որ իմ իշխանութեանս հաւասար իշխա-
նութիւն ունէր և զիս միայն իբրեւ դլուխ և պատուոյ նա-
խագահ առաքելոց ճանչնալու պարտաւոր էր։

ԼՈՒՍ. Լաւ, շարունակեմ ուրեմն։ Երբոր Հայերուն մէկ
մասն էջմիածնական մասէն զատուելով՝ կաթոլիկ անուա-
նեցաւ, Պենեդիկտոս չորեքտասաներորդ, քու յաջորդդ,
Աբրահամ անուամբ եպիսկոպոս մը այս կաթոլիկ Հայերուն
Կաթողիկոս ըրաւ և մասնաւոր կոնդակով՝ յիշած Աբրա-
համ Հայրապետս՝ իբրեւ իմ յաջորդս և Հայոց առաքելա-
կան եկեղեցւոյն սեպհական եղող իրաւանց օրինաւոր ժա-
ռանգ ճանչցաւ, և Պենեդիկտոսին յաջորդող պապերն ալ

նոյնպէս իմ յաջորդներուս բալիոն մը տալով գոհացան և անոնց աղտ իշխանութեան չը դպան։

ՊԵՏ. Ի՞նչ իրաւունք ունէին դպչելու։

ԼՈՒՍ. Ամենեւին իրաւունք չունէին, բայց այսօր՝ Պիոս ԻՆԵՐորդ, որ նմանապէս քու յաջորդդ է, Հայ Կաթոլիկ եկեղեցւոյն իրաւանց բռնութեամբ տիրել կ'ուզէ և իր այս անիրաւ պահանջմանց օրինաւոր երեւոյթ մը տալու համար՝ կը հաստատէ որ դու, դլուխ առաքելոց և Հռոմէական եկեղեցւոյն հիմնադիր Հայրապետ, դու այս իրաւունքս 'ի սկզբանէ շնորհած ես Թադէոսին. ուստի և դու (որովհետեւ Պիոս և դու մէկ էք) կրնաս շնորհածդ դարձեալ այսօր ետ առնել։

ԼՈՒՍ. Անարատ եմ, Հայրապետ. ես ոչ Հայոց եկեղեցական իրաւունք շնորհած եմ և ոչ այսօր չը շնորհած բանս դարձեալ ետ առնել կ'ուզեմ։ Բայց դնեմ թէ շնորհած ըլլամ, ի՞նչ երեսով կրնամ հաղար ութն հարիւր և այսքան տարի առաջ մէկու մ'ըրած պարդեւս այսօր պահանջել և բռնի ետ առնել։ Բայց չէ, բան շնորհած չեմ. պնդողին Աստուած շնորհք տայ։

ՊԵՏ. Պնդողն ո՞վ է, քու յաջորդդ որ անսխալ եմ կ'ըսէ։

ԼՈՒՍ. Քաւ լիցի, ես անսխալ չեմ. այսու ամենայնիւ մարդկային և՝ որ աւելին է՝ առաքելական դատողութիւն ունիմ՝ որ բաւական է այս խնդիրս լուծելու։ Պաղին այս ըրածն անիրաւութիւն է և, թէ որ իմ յաջորդս չըլլար, աւազակութիւն է կ'ըսէի։

ԼՈՒՍ. Այո՛, աւազակութիւն է և ի՞նչպիսի աւազակութիւն. հարուստ մը գայ՝ աղքատի մը անէն կարասին դողնայ, ի՞նչ անօթ։ Կը յիշե՞ս, Պետրոս առաքեալ, Նաթան մարգարէն Դաւիթ թագաւորին խրատական առակ մը պատմեց։ "Ամբաւ արջառ ունեցող մեծատուն մը, ըսաւ, Զատկին ոչխար մը զոհելու եղաւ և իր ոչխարներէն մորթել չուզելով՝ գնաց իր աղքատ դրացւոյն մէկ հատիկ ոչխարն՝ առանց խղճալու՝ դողցաւ և մորթեց"։ Ահա այն ագահ մեծատունն այս Պիոս պապն է։ Նաեւ թէ որ Հռոմ հնուց մեզ շնորհք մ'ըրած ըլլար, դայն այսօր մեզմէ պահանջելու չէր։ Միթէ կրնայ մարդ մը աղքատին թասին մէջէն իր տուած դահեկանն "իմն է" ըսելով հանել և առնել։ Բայց ոչ ողորմութիւն ընող կայ և ոչ ողորմութեան կարօտ աղքատ։

ՊԵՏ. Թէ որ ես օրինակ բերած աղքատդ ըլլամ՝ թասս այն անխոհեմին գլխուն կանցընեմ. գիտես որ բնութեամբ կրակոտ եմ, թէպէտ և այս իմ դռնապանութեան պաշտօնս դիս քիչ մը համբերող ըրաւ։ Բայց խօսքդ ընդհատեցի, շարունակէ, Հայրապետ։

ԼՈՒՍ. Դէշն այս է որ, Տաճկին ըսածին պէս, անտառին մէջ տապար մտաւ և կոթն ալ մեզմէ է։ Պետրոս ութերորդ Կիլիկիոյ Հայրապետին յաջորդեց խորամանկ մարդ մը որ պապին մանաւորապէս սիրելի է, ինչու որ Հռոմայ խնարհ ծառան է և երկայն ժամանակէ 'ի վեր Կաթոլիկ Հայերն ամենաբար լատինացնելու կը ջանայ։ Այս մարդս որ հրապարակաւ խոստացած՝ նաեւ երդում ըրած էր աղդին եկեղեցական իրաւանց հաստատուն պաշտպանն ըլլալու և զանոնք ոչ երբեք մատնութեամբ Հռոմայ յանձնելու, Հռոմ գնաց և փոխանակ աշխարհածանօթ երդման հաւատարիմ մնալու, փութաց՝ զենքերով հանդերձ՝ թշնամւոյն անձնատուր ըլլալու։ Ասոր վրայ աղդս մեծաւ մասամբ ոտք ելաւ և պապին անիրաւութեան և վերոյիշեալ իրաւանց աւանդապահ եղող անձին մատնութեան դէմ բողոքելով այս իրաւունքս պահանջեց յափշտակողէն, սակայն սակաւաթիւ ոմանք լատինութիւնն յանձն առին և ճշմարիտ Կաթոլիկ Հայերուն բողոքին դէմ բողոքեցին. բայց ես զանոնք իբրեւ հարազատ զաւակ չեմ ճանչնար և յիշած հաւերուդ կը նմանեցնեմ, այս տարբերութեամբ որ արդէն համեմին վրայ համամիտ եղած են և խոհարարին նաեւ փառք կուտան. բայց զատոնք թողում։ Այս արեւելեան անուամբ պարծեցող ճշմարիտ Կաթոլիկ Հայերուն բողոքին Հռոմ չափ մը ժամանակ մտիկ չըրաւ և պատասխան չը տուաւ. բայց վերջապէս, երբոր տեսաւ որ խռովութիւնն ազգիս մէջ՝ փոխանակ նուազելու՝ երթալով կաւելնար, մտածեց որ սպառնալով կրնայ ազգս վախցնել և իր անիրաւ

հրամանին հնազանդեցնել․ ուստի մամաւոր նուիրակ մը Կոստանդնուպօլիս ղրկեց և անոր բացարձակ իշխանութիւն տուաւ կապելու, լուծելու, կախակայելու, բանադրելու, նզովելու, անիծելու, հարստահարելու, չանթահարելու՝ յանուն Հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ։ Այս սարսափելի մարդս Պօլիս եկաւ, շատ սպառնաց՝ բայց մարդ չը վախցաւ․ ազգս ամուր կեցաւ և քայլ մը ետ չառաւ։ Ահա ազգս հիմայ այս խռովեալ վիճակին մէջ է։ Երէկ ես, Թադէոս առաքեալ, Ադդէ կաթողիկոս, Մեծն Ներսէս կաթողիկոս, Աբրահամ կաթողիկոս, Մխիթար Աբբահայր, Նարեկացին, Շնորհալին, Լամբրոնացին և քանի մը ուրիշ ազգային սուրբեր, և աշխարհականներէն՝ Աբգար Թագաւոր, Մեծն Տրդատ, Վարդան Մամիկոնեան, եւայլն, ժողով մը կազմեցինք, Հռոմայ բռնութեան և անիրաւ պահանջմանց սահման մը դնելու և ազգիս մէջ հերձուած մը խափանելու համար, պապին դէմ բողոք մը գրեցինք և ամենքս ալ ստորագրեցինք։ Հիմայ այս բողոքագիրս Հայր Աստուած կարդացած է և անշուշտ ասոր վրայ քու կարծիքդ հարցնելու համար՝ զքեզ կանչել տուած է․ Հոգիդ սիրես, Պետրոս Առաքեալ, այս մեր դատին մէջ մեր կողմն եղիր և կամ, թէ որ յաջորդդ դատապարտել չուզես, գոնէ չէզոք կեցիր։

ՊԵՏ. Ձէ, չէզոք պիտի չը կենամ, Պիոսին անվայել ընդունելութիւնն իմ պատւոյս դպաւ․ նա՛ս աշխարհիս ցուցընեմ որ ես պապին ձեռքին մէջ խաղալիկ մը չեմ, յետոյ այս փատաբանութեան պաշտօնէս բոլորովին հրաժարիմ։

ԼՈՒՍ. կրնամ ուրեմն օգնութեանդ վրայ վստահիլ։

ՊԵՏ. կրնաս․ բայց Հայր Աստուած չը սպասէ․ ողջամբ մնաս, Հայրապետ։

ԼՈՒՍ. Ողջամբ երթաս, Պետրոս առաքեալ, Աստուած գործդ յաջողէ։

ՀԱՆՐ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

3789

3673